ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Նախապատրաստեցին՝

Գագիկ Հարությունյան
Հայկ Հովհաննիսյան

Հուլիս - 2018թ.

Բովանդակություն

1. Նախաբան
2. Կառուցակարգային քաղաքականություն
3. Արդարադատության որակի բարձրացում
4. Մշտադիտարկում և գնահատում

Մաս 1

Նախաբան

- Իրավունքի գերակայությունը ժողովրդավարական հասարակությունում պահանջում է ոչ միայն դատական իշխանության անկախություն, այլ նաև իրավասու և գործունակ դատարանների առկայություն, որոնք կիրականացնեն միջազգային չափանիշներին համապատասխան *արդյունավետ արդարադատություն՝ սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության համատեքստում:*

- Դատավորների գործունեության արդյունավետությունն անհրաժեշտ պայման է ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի իրավական պահանջներին համապատասխան մարդու իրավունքների պաշտպանությունն իրականացնելու գործընթացում, ինչպես նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սկզբունքների ապահովման միջոցով բարձրացնելու հանրային վստահությունն արդարադատության նկատմամբ:

Արդարադատության իրականացման հիմնական սկզբունքներն են՝

- Դատավորն անկախ և անաչառ է, ղեկավարվում է միայն օրենքով:
- Դատական գործի քննությունն իրականացվում է արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետներում:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդված

Արդյունավետության բարձրացման և որակի կառավարման շրջանակային փաստաթղթերը և նախադեպային իրավունքը.

Շրջանակային փաստաթղթերը

- «Դատավորների անկախության, արդյունավետության և դերի մասին» ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ (94) 12 հանձնարարականը
- «Դատարանների ծանրաբեռնվածության մասին» ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ (86) 12 հանձնարարականը
- Դատավորների Մագնա Կարտա (Հիմնարար սկզբունքներ), 2010թ.
- Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի կարծիքները, մասնավորապես՝ «Արդար դատաքննություն ողջամիտ ժամկետում» թիվ 6, «Արդարադատության (դատական) խորհուրդները՝ ի շահ հանրության» թիվ 10, «Դատական որոշումների որակը» թիվ 11, «Դատավորների գնահատումը, արդարադատության որակը» թիվ 17 կարծիքները

Նախադեպային իրավունքը

- ՄԻԵԴ
- Ազգային դատարաններ

Առկա հիմնական խնդիրները

- Դատարանների գործունեությանն ուղղակի կամ անուղղակի միջամտության դեպքերը
- Դատարաններում գործի քննության երկարատևությունը և ծախսատարությունը (transaction costs)
- Մեծ թվով դատավորների մասնագիտական պատրաստվածության դեռևս ոչ բավարար մակարդակը՝ ներառյալ գործի կառավարման կարողությունները
- Դատական ակտերին ներկայացվող պահանջների (իրավական որոշակիություն, անպայմանականություն, լրիվություն, պատճառաբանվածություն և այլն) ոչ լիարժեք պահպանումը
- Դատական ակտերի կատարման ոչ բավարար մակարդակը
- Դատարանների ոչ օպտիմալ ծանրաբեռնվածությունը

Արդյունավետ արդարադատության իրականացման հենասյուները

ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ

Անկախությունը պետք է վաստակել, այն չի տրվում ինքնաբերաբար: Անկախության լավագույն երաշխիքը թափանցիկ և պատշաճ արդարադատության իրականացումն է

ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվետվողականությունն անհրաժեշտ նախապայման է ապահովելու դատավորի և դատարանների անկախությունը՝ ներառյալ յուրաքանչյուր գործի թափանցիկությունը

ՈՐԱԿ

Իրավական որոշակիության սկզբունքին համապատասխան և ողջամիտ ժամկետում դատական ակտի կայացումն է

- ***Անկախությունը*** չպետք է խոչընդոտ կամ արգելք հանդիսանա դատարանների գործունեության արդյունավետությունն ապահովելու հարցում: Անկախությունը պաշտպանում է դատավորին՝ որպես դատական իշխանության ներկայացուցչի և մարդու իրավունքների երաշխավորի
- ***Արդյունավետությունը*** վերաբերում է դատավորի դերակատարությանը դատական իշխանությունում, որից հանրությունն ակնկալում է հստակություն, արագություն, մատչելիություն, քաղաքավարություն, նրբանկատություն (հատկապես՝ տուժողների իրավունքների նկատմամբ) և արդյունավետություն՝ իրենց իրավունքների և շահերի պաշտպանության ու պարտավորությունների սահմանման գործընթացներում, իրենց իրավաչափ սպասելիքների երաշխավորված իրացում: Այն որպես ինտեգրալ սկզբունք ներառում է ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի, դատական խնայողության սկզբունքի, կանխատեսելիության և մատչելի ընթացակարգերի կիրառման առաջնահերթության ապահովում

- Արդյունավետության էությունն արդար դատաքննության լույսի ներքո ողջամիտ ժամկետներում որակյալ դատական ակտ կայացնելն է, որը պետք է կատարվի առանց բյուրոկրատական խոչընդոտների և միջամտությունների

- Դատավորները պարտավոր են ապահովել գործերի արդյունավետ կառավարումը (case management), որոնց համար նրանք պատասխանատու են՝ ներառյալ (իրենց իրավասության շրջանակներում) դատական ակտերի կատարումը

Մաս 2

Կառուցակարգային քաղաքականություն

Կառուցակարգային քաղաքականություն

- Բարձրագույն դատական խորհուրդը պետք է երաշխավորի դատական իշխանության անկախությունը և արդարադատության իրականացման որակի ու արդյունավետության ապահովումն ու բարելավումը:

- Բարձրագույն դատական խորհուրդը պատասխանատու է դատարանների գործունեության արդյունավետ կազմակերպման համար: Խորհրդի քաղաքականությունն ուղղված է այնպիսի պայմանների ապահովմանը, որոնք հնարավորություն կընձեռեն դատավորներին անխափան իրականացնել իրենց առաքելությունը:

Արդարադատության իրականացման արդյունավետության բարձրացման տեսլականը

ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ

- հավասարություն
- անկախություն և անաչառություն
- քննության արագություն
- հրապարակայնություն
- թափանցիկություն
- որաշակիություն
- ակտի պարտադիր և կատարելի լինելը

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՇԱՐԺԻՉ ՈՒԺ

- անկախ իշխանություն և դատարանների օպտիմալ ինքնակառավարում

ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

- իրավական քաղաքականություն և պլանավորում
- ռեսուրսների կառավարում
- դատավարական գործընթացներ և վարույթներ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- հուսալի արդարադատություն
- հասանելի և մատչելի ծառայություններ
- հանրային վստահություն

Կառուցակարգային քաղաքականություն

- Արդյունավետությունն ապահովելու նպատակով դատավորները պետք է իրենց գործունեության կազմակերպման հարցերում առաջնորդվեն այն որոշումներով և քաղաքականությամբ, որոնք ընդունվում են Բարձրագույն դատական խորհրդի կողմից՝ հաշվի առնելով, որ դրանք չեն կարող խոչընդոտել կամ հակադրվել դատական իշխանության ինքնավարության սկզբունքին:

- Արդունավետությունը ենթադրում է գործերի կառավարման թե՛ որակական և թե՛ քանակական բաղադրիչներ: Այն տարածվում է և՛ դատավորների, և՛ դատական իշխանության կազմակերպչական հարցերով պատասխանատու մարմինների վրա:

Կառուցակարգային քաղաքականություն

- Դատավորները պետք է գիտակցեն արդարադատության արդյունավետության բարձրացման մեջ իրենց հսկայական դերակատարությունը, ներդրումը և պետք է օգտագործեն գործերի կառավարման՝ օրենքով սահմանված ցանկացած միջոց, ինչպես նաև ցուցաբերեն անձնական պատրաստակամություն և կազմակերպվածություն (պատշաճ պատրաստվածություն, ճշտապահություն և հասանելիություն աշխատանքային ժամերին, ծանուցում բացակայության վերաբերյալ, անխուսափելի բացակայությունների վերաբերյալ պատշաճ հիմնավորում և այլն):

Կառուցակարգային քաղաքականություն

Դատավորի գործունեության հիմնական սկզբունքներն են.

- պաշտպանել բոլորի իրավունքներն ու ազատությունները հավասարապես,
- ձեռնարկել վեճերի լուծման արդյունավետ և մատչելի քայլեր,
- հետևողականություն դրսևորել դատավորի վարքագծի և էթիկայի կանոններին հետևելու հարցում,
- ժամանակին, նվազագույն ծախսերով և անկախորեն քննել գործերը՝ առաջնորդվելով միայն օրենքով,
- հասկանալի և պարզ լեզվով պատճառաբանված հիմնավորումներ տալ կայացված որոշումների վերաբերյալ,
- ընդունել այնպիսի դատական ակտեր, որոնք հնարավոր կլինի արդյունավետ կերպով կատարել և կնպաստեն իրավունքի գերակայության արմատավորմանը և գործարար միջավայրի բարելավմանը:

Մաս 3

Արդարադատության որակի բարձրացում

Որակի բարձրացում

- Դատական վարույթը և դատական ակտի որակը կախված են ոչ միայն դատավորի անձնական և մասնագիտական որակներից, այլև մի շարք արտաքին գործոններից, ինչպիսիք են՝ գործող օրենսդրության որակը, դատական իշխանության ռեսուրսները և դատավորների համար նախատեսված ուսումնական դասընթացների որակը:

- Դատական ակտի որակի վրա ազդում են նաև մի շարք ներքին գործոններ, ինչպիսիք են՝ դատավորների մասնագիտական և անձնական որակներն ու հմտությունները, գործերի և դատական նիստերի ճիշտ կազմակերպումը, արդար և օրենքի պահանջներին համապատասխան դատական ակտեր կայացնելու համար անհրաժեշտ այլ տարրեր:

Արդարադատության որակ

Արդարադատության իրականացման արդյունավետության բարձրացումը և որակի կառավարումը պետք է իրականացնել հետևյալ ուղղություններով.

- դատարանների գործունեություն,
- արդարադատության մատչելիություն,
- դատավարական գործընթաց,
- վստահությունը դատարանների նկատմամբ,
- վեճի սպառիչ լուծում:

Գնահատման համակարգ

- Դատական ակտերի իրավաչափությունը վերահսկվում է Դատական օրենսգրքով, այլ ակտերով նախատեսված բողոքարկման ընթացակարգերով և ՄԻԵԴ դիմելու իրավունքով:
- Արդարադատության որակի գնահատման համակարգը նպատակ ունի բարձրացնել դատական ակտերի որակը, այլ ոչ թե ծառայել իբրև դատական իշխանության արտաքին կառավարման բյուրոկրատական գործիք:
- Արդարադատության որակի գնահատումը, որպես դատական իշխանության գործունեության բնութագրիչ, չպետք է շփոթել առանձին դատավորի անհատական գնահատման հետ:

Գնահատման տեխնոլոգիան

- Արդարադատության որակի գնահատումը պետք է իրականացնել՝ կիրառելով չափորոշիչներ, հաշվի առնելով սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության ամբողջական ընթացքը, օրինակ՝ *վարույթի տևողությունը, իրավական ենթակառուցվածքների առկայությունը, դատական ակտերի բողոքարկումը և վերջնական ակտի կատարումը:*
- Որակի գնահատման կարևոր չափորոշիչ է նաև նախադեպերի և գործող օրենսդրության համադրման, դատավորի և դատավարության կողմերի ու իրավասու այլ մարմինների միջև համագործակցության առկայությունը:
- Դատարանների արդյունավետ գործունեության ապահովումը և դատավորների անհատական բարձր որակների երաշխավորումը պետք է փոխլրացնող և փոխպայմանավորված լինեն:

Մաս 4

Մշտադիտարկում
և գնահատում

Ընդհանուր մոտեցումները

- Մշտադիտարկման հիմնական նպատակն է բացահայտել և գնահատել արդարադատության իրականացման կարիքները /օրինակ՝ փոփոխել օրենսդրությունը, բարելավել դատավարական ընթացակարգերը, դրանք կազմակերպել առավել օպտիմալ, մշակել ուսումնական դասընթացների փաթեթներ և այլն/, ինչպես նաև երաշխավորել դատավորների հաշվետվողականությունն օրենքի առջև:

- Բարձրագույն դատական խորհուրդը պետք է սահմանի քանակական և որակական տեղեկությունների հավաքման և վարման կարգը, ինչպես նաև մշտադիտարկման մեթոդաբանությունը և ներդնի արձագանքման համակարգ:

Արդարադատության որակի բարձրացման մոդել

1. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

2. ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ԵՎ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Ապահովել գործի արդարացի, հրապարակային և արագ քննություն՝ ներառյալ դատական ակտի արդյունավետ կատարում

3. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՍԱԼԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ապահովել արդարադատության վերաբերյալ տեղեկությունների հասանելիությունը հանրությանը

4. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ներդնել մարդկային ռեսուրսների կառավարման համակարգ՝ ապահովելու պրոֆեսիոնալ դատավորներ և այլ աշխատակազմ

5. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Ձեռնարկել բոլոր միջոցները՝ ապահովելու դատարանների գործունեության նյութա-տեխնիկական բազան

Մշտադիտարկման ուղղությունները

- Արդարադատության որակի չափորոշիչները պետք է գնահատեն.

1. իրավունքի գերակայության ապահովումը,
2. արդար դատաքննության իրավունքի երաշխավորվածությունը,
3. ողջամիտ ժամկետում գործի արդյունավետ քննությունը և լուծումը,
4. դատական ակտի կայացումը, բողոքարկումը և արդյունավետ կատարումը,
5. դատարանների կողմից քաղաքացիներին որակյալ ծառայությունների մատուցումը:

Հիմնական չափորոշիչների խմբերը

Արդարադատության արդյունավետությունն ու որակը մշտադիտարկվում և գնահատվում են հետևյալ 43 չափորոշիչներով.

- դատավարական գործընթացը – 10,
- դատական ակտը – 7,
- դատավորի վարքը կողմերի և հասարակության նկատմամբ – 6,
- դատավարության արագությունը – 4,
- դատավորի անձնական որակները և մասնագիտական ունակությունները – 6,
- դատավարության կազմակերպումը և կառավարումը – 10,

ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

- Դատավարությունը բաց է և թափանցիկ կողմերի համար:
- Դատավորը գործում է անկախ և անկողմնակալ:
- Դատավարությունն իրականացվում է ողջամիտ ժամկետում: Խրախուսվում է պարզեցված ընթացակարգի կիրառումը:
- Խրախուսվում է ակտիվ, բայց ոչ պարտադիր միջոցների ձեռնարկումը կողմերի հաշտության համար (քաղաքացիական գործեր և քաղաքացիական պատասխանատվության հիմնախնդիրներ քրեական գործերի քննության շրջանակներում):

ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ /շարունակություն/

- Գործընթացը կազմակերպվում է արդյունավետև դինամիկ կերպով (նյութական և դատավարական նորմերի պահպանմամբ):
- Դատավարությունը կազմակերպվում և իրականացվում է այնպես, որ դատական ծախսերի չափը գործին մասնակցող անձանց համար հասցվում է նվազագույնի:
- Դատավարությունը կազմակերպվում է ճկուն կերպով:
- Դատական վարույթը հրապարակային է:
- Դատավարությունն անմիջական (ինտերակտիվ) է:
- Դատավարությունը մատչելի է հաշմանդամություն ունեցող մարդկանց համար:

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԸ

- Դատական ակտերն օրինական են:
- Դատական ակտերը հիմնավորված են և պատճառաբանված:
- Դատական ակտերը համահունչ են իրավական որոշակիության սկզբունքին:
- Դատական ակտերի հիմնավորումը մանրամասն է և համակարգված:
- Դատական ակտերի պատճառաբանական մասն ընկալելի է:
- Դատական ակտն ունի հստակ կառուցվածք, լեզվաբանորեն և տեխնիկապես ճշգրիտ է:
- Դատական ակտի հրապարակումը մատչելի է:

ԴԱՏԱՎՈՐԻ ՎԱՐՔԸ ԿՈՂՄԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

- Դատավորը գործին մասնակցող անձանց և հանրության նկատմամբ ցուցաբերում է հարգալից վերաբերմունք:
- Դատավարության ընթացքում գործին մասնակցող անձանց աջակցություն է ցույց տրվում՝ միևնույն ժամանակ պահպանելով անկողմնակալության, անաչառության և հավասարության սկզբունքները:
- Խորհրդատվական և դատական այլ ծառայություններ են մատուցվում հենց այն պահից, երբ անձը մուտք է գործում դատարան:
- Գործի մասնակիցներին տրամադրվում է անհրաժեշտ տեղեկատվություն գործի եւ դրա ընթացքի վերաբերյալ:
- Հաղորդակցությունը և հանրային կապերը կարգավորված են և գործում են անհրաժեշտության դեպքում:
- Նիստերի դահլիճի կահավորանքը համապատասխանում է հատուկ կարիքների ունեցող անձանց տարբեր խմբերի պահանջներին:

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆԸ

- Գործը քննվում է դատավարության կազմակերպման համար սահմանված ողջամիտ ժամկետներում՝ հաշվի առնելով նաև ըստ տեսակի ու բարդության գործերի քննության միջին տևողության ուղենիշային ժամկետները:
- Գործի ժամանակացույցը կազմելիս հաշվի են առնվում կողմերի համար գործի հրատապությունը և դատավարության տևողությունը՝ նախնական քննության փուլերում:
- Գործին մասնակցող անձինք ունեն ներքին համոզմունք, որ դատավարությունը պատշաճ կարգով է իրականացվում
- Հավատարիմ են մնում սահմանված կամ համաձայնեցված ժամկետներին:

ԴԱՏԱՎՈՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Դատավորները հետևողական են իրենց հմտությունների և մասնագիտական ունակությունների զարգացման և բարելավման հարցերում:
- Դատավորները պարբերաբար մասնակցում են հատուկ մշակված վերապատրաստման դասընթացների:
- Դասընթացին դատավորների մասնակցությունը համաձայնեցվում է յուրաքանչյուր տարի անցկացվող անհատական զարգացման քննարկումների ընթացքում:
- Դատարանն ունի մասնագիտացված դատավորներ:

ԴԱՏԱՎՈՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԸ ԵՎ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ /շարունակություն/

- Կողմերը և փաստաբաններն ունեն ներքին համոզմունք առ այն, որ դատավորը գործին լավ է տիրապետում և պատրաստված է:

- Դատավորները կանոնավոր կերպով և ակտիվորեն մասնակցում են դատավորների ընդհանուր ժողովներին, որակի բարելավման համաժողովներին, վերապատրաստման ծրագրերին, ինչպես նաև համանման այլ ձեռնարկների:

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

- Դատավարության կազմակերպումը և կառավարումն իրականացվում է բարձր մակարդակով և խթանում է դատարանի ծանրաբեռնվածության նվազեցումը:
- Դատավորների միջև գործերի բաշխումն իրականացվում է հստակ մեթոդաբանությամբ և վստահելի եղանակով:
- Դատավորների մասնագիտացումը հաշվի է առնվում դատավարության կազմակերպման գործընթացում:
- Իրականացվում է գործի քննության կազմակերպման հստակ պլանավորում՝ ելնելով դրանց բնույթից ու առանձնահատկություններից:
- Յուրաքանչյուր դատավորի հետ ամեն տարի անհատական խորհրդատվություն է անցկացվում:
- Ապահովվում է դատավորի ծանրաբեռնվածության օպտիմալացում:

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ /շարունակություն/

- Դատարանն ունի դատավարական ընթացակարգի վերահսկողության մեթոդաբանական համակարգ, որը հնարավորություն է տալիս արագացնելու հրատապ և հետաձգված գործերը:
- Դատավարության մասնակիցների և դատարանի աշխատակազմի անվտանգությունը երաշխավորված է:
- Դատավարության կառավարումն իրականացվում է այնպես, որ նվազեցվի դատավորների և մյուս աշխատակիցների գերծանրաբեռնվածությունը:
- Առկա է դատական ակտերի բողոքարկման արդյունավետ համակարգ:
- Առկա են թվային վարույթների հնարավորություններ:

Գնահատման մեթոդները

- դատավորների ինքնագնահատում,
- վիճակագրական մեթոդներ (որակական և քանակական),
- փորձագիտական հետազոտություններ և կարծիքներ,
- հարցումներ,
- դատական իշխանության այլ ներկայացուցիչների գնահատում,
- տեղեկատվական մշտադիտարկման կազմակերպում:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ